ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ

ՈՒՂԵՑՈՒՅՑ 1
ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԳԾՈՎ

Ապահովագրական հատուցում վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշման փաթեթն ստանալուց հետո Ապահովադիրը, Ապահովագրված անձը և Տուժողը (այսուհետ՝ Հաճախորդը) արդյունքներին չհամաձայնելու դեպքում իրավունք ունեն պահանջ ներկայացնել ստորև նշված եղանակներից որևէ մեկով.

- Պահանջ ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին. մանրամասներին ծանոթանալու համար սեղմե՛ք այստեղ *(ծառայությունն անվճար է):*
- ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ 5 աշխատանքային օրվա ընթացքում (ցանկալի է հնարավորինս շուտ / ամենաուշը 4 աշխատանքային օրվա ընթացքում) ծանուցումը ստանալուց հետո ապահովագրական ընկերությանը դիմում ներկայացնել կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ, որից ստացել են ապահովագրական հատուցում վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշումը և որի շրջանակներում ենթակա է բողոքարկման փորձագիտական եզրակացությունը *(վճարովի ծառայություն)*:

Կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմում ներկայացնելու համար պահպանել ստորև նշված քայլերի հաջորդականությունը՝

1. Ընտրել փորձաքննության տեսակը.

Կրկնակի փորձաքննությունների կազմակերպման կարգը և ժամկետները			
Կրկնակի փորձաքննության տեսակը		Փորձաքննության իրականացման առավելագույն ժամկետը	ՀՀ տարածքում փորձաքննության իրականացման գինը (ՀՀ դրամ)
ՎՆԱՍԻ ՉԱՓ. Գույքին պատճառված վնասի մասով կրկնակի փորձաքննություն	Պատահարների ինքնուրույն գրանցմամբ վնասի հատուցման գործընթացում	3 աշխատանքային օր	1. Թղթային համաձայնեցված հայտարարագիր կազմված լինելու դեպքում՝ 6,000 ՀՀ դրամ 2. Երևանից դուրս տեղի ունեցած պատահարի դեպքում՝ 6,000 ՀՀ դրամ 3. Երևանում տեղի ունեցած պատահարը բջջային հավելվածով գրանցված լինելու դեպքում՝ 16,000 ՀՀ դրամ, 3.1 եթե համաձայն կրկնակի փորձաքննության արդյունքների գույքին պատճառված վնասը չի գերազանցում 200,000 ՀՀ դրամը, ապա՝ վճարված 16,000 ՀՀ դրամից 10,000 ՀՀ դրամը ենթակա է վերադարձման
	Այլ հատուցման գործընթացներում	5 աշխատանքային օր	1. Եթե բողոքարկվող փորձագիտական եզրակացությամբ վնասը գնահատվել է 1,800,000 ՀՀ դրամ կամ ավելի՝ 30,000 ՀՀ դրամ 2. Մնացած դեպերում՝ 16,000 ՀՀ դրամ
	Մեղավորության և վթարի մեխանիզմի համապատասխանության որոշում	5 աշխատանքային օր	20,000

ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. Պատահարի առաջացման պատճառների կրկնակի փորձաքննություն	Մեղավորության և վթարի մեխանիզմի համապատասխանության և ներկայացված վթարի հետ ՏՄ-ների վրա առկա հետքերի համատեղելիության որոշում	10 (5+5) աշխատանքային օր	65,000 (20,000+45,000)

2. Ընտրված փորձաքննության համար կատարել վճարում 1-ին կետի աղյուսակում սահմանված չափով ստորև նշված բանկի հաշվեհամարին՝ վճարման ժամանակ նշելով ստորև սահմանված տեղեկատվությունը
(«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին Կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմում ներկայացնելու դեպքում).

Բանկի անվանում	Հաշվեհամար	Հաշվետեր	Նպատակ դաշտում նշման ենթակա տեղեկատվություն (Դիմումատուի անուն,ազգանուն, ԱՄ դեպքում՝ հաշվառման համարանիշ/Այլ գույքի դեպքում՝ անվանում, Որոշում-ծանուցման համար)
«Արարատ Բանկ» ԲԲԸ	1510035133640200	«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	*Օրինակ՝ Պողոս Պողոսյան, OOUU000 կամ ավտոտնակ, CT00000001*

3. 5 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերություն ներկայացնել (նշված ժամկետները չպահպանելու դեպքում դիմումը կարող է մերժվել)՝ կրկնակի փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ պահանջի վերաբերյալ դիմումը և կից փաստաթղթերը ստորև նշված տարբերակներից որևէ մեկով.

Տարբերակ 1 (LIGA MOBILE բջջային հավելվածի միջոցով)

Ներբեռնել բջջային հավելվածը այս հղումով՝

- Մուտք գործել «Դիմում» բաժին և սեղմել «Ավելացնել դիմում» կոճակը, ընտրել «ԱՊՊԱ կրկնակի փորձաքննության դիմում» տարբերակը և լրացնել անհրաժեշտ տվյալները:
- Դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի և լիազորագրի լուսապատճենը կցել, եթե դիմում ներկայացնող անձը տարբերվում է Ապահովագրվածանձից, Ապահովադրից և/կամ Տուժողից:
- Ապահովադրի անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը կցել:
- Վնասված գույքի լուսանկար/ները առկայության դեպքում կցել:
- Վնասված գույքի տեսագրություն/ները առկայության դեպքում կցել:
- Փորձաքննության համար կատարված վճարման անդորրագրի լուսապատճենը կցել:
- Ավտոտրանսպորտային միջոցին կամ այլ գույքին, որի գծով ներկայացվում է դիմումը, վերաբերող փաստաթղթերը կցել.
  - Գույքի նույնականացման տվյալները պարունակող փաստաթղթի լուսապատճենը,
  - Ավտոտրանսպորտային միջոցի (հաշվառման (գրանցման) վկայագրի կամ հայտարարագրի կամ նմանատիպ փաստաթղթի լուսապատճենը:

Տարբերակ 2 (Կայքի միջոցով)

Սեղմելով այստեղ՝

- Կրկնակի փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ պահանջի վերաբերյալ դիմումը լրացնել:

- Փորձաքննության համար կատարված վճարման անդորրագրի լուսապատճենը կցել:
- Անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը կցել:
- Ավտոտրանսպորտային միջոցին կամ այլ գույքին, որի գծով ներկայացվում է դիմումը, վերաբերող փաստաթղթերը կցել.
  - Գույքի նույնականացման տվյալները պարունակող փաստաթղթի լուսապատճենը,
  - Ավտոտրանսպորտային միջոցի (հաշվառման (գրանցման) վկայագրի կամ հայտարարագրի կամ նմանատիպ փաստաթղթի լուսապատճենը:
- Լուսանկար/ները առկայության դեպքում կցել:
- Տեսագրությունները (առկայության դեպքում) կցել:
- Լիազորագրի լուսապատճենը կցել, եթե դիմում ներկայացնող անձը տարբերվում է Ապահովագրվածանձից, Ապահովադրից և/կամ Տուժողից:

Տարբերակ 3 (Էլ. փոստի միջոցով)

dimum@liga.am էլ. հասցեին ուղարկելով.

- Կրկնակի փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ պահանջի վերաբերյալ լրացված/ստորագրված դիմումի լուսապատճենը:

  (Դիմումի Ձևաթուղթ / Դիմումի լրացման ուղեցույց)
- Փորձաքննության համար կատարված վճարման անդորրագրի լուսապատճենը,
- Անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը,
- Ավտոտրանսպորտային միջոցին կամ այլ գույքին, որի գծով ներկայացվում է դիմումը, վերաբերող փաստաթղթերը՝
  - Գույքի նույնականացման տվյալները պարունակող փաստաթղթի լուսապատճենը,
  - Ավտոտրանսպորտային միջոցի (հաշվառման (գրանցման) վկայագրի կամ հայտարարագրի կամ նմանատիպ փաստաթղթի լուսապատճենը:
- Լուսանկար/ները (առկայության դեպքում):
- Տեսագրություն/ները (առկայության դեպքում):
- Լիազորագրի լուսապատճենը, եթե դիմում ներկայացնող անձը տարբերվում է Ապահովագրված անձից, Ապահովադրից և/կամ Տուժողից:

4. Դիմումը հաստատվում է ուղարկման հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերությունից ստացած ձայնագրվող հեռախոսազանգի միջոցով:

   Դիմումին ընթացք է տրվում, եթե այն ներկայացվել է սահմանված կարգով/ձևով և վերջինիս կցված են եղել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ ներառյալ կրկնակի փորձաքննության համար պահանջվող վճարի կատարման փաստը հավաստող փաստաթուղթը:

Ուշադրություն !

Ապահովագրական ընկերությունը վերադարձնում է Հաճախորդի կողմից կատարած վճարումները՝ համաձայն ՀԱԲ ԱՊՊԱ ընդհանուր կանոնների, մասնավորապես՝

- Եթե կրկնակի փորձաքննության համար նախապես վճարված գումարը գերազանցում է կրկնակի փորձաքննության իրականացման համար կատարված ծախսերը, ապա վերադարձնում է տարբերության չափով:

- Եթե կրկնակի փորձաքննության անցկացման պահանջը մերժվել է, ապա վերադարձնում է վճարված գումարն ամբողջությամբ:

Հաճախորդը ապահովագրական ընկերությանը պարտավոր է փոխհատուցել պակաս վճարված գումարի չափով, եթե Հաճախորդի կողմից վճարված գումարը պակաս է կրկնակի փորձաքննության իրականացման համար փորձագետին վճարված գումարից: